| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 26 | Հուլիս | 2018 թ. | | Ա | 4191919714 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշվի | |
| 26 | Հուլիս | 2018 թ. | | Սերիա | Համար |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 9 4 0 7 9 8 8 |
| [9] Անվանումը | ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 9 4 0 7 9 8 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | ՎՏԲ-Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն |
| | Լիազորագիր: Համար |
| | Լիազորագիր: Ամսաթիվ |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (չափման միավորով) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Թիվ 41200618 թր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն | դեպք | 1 | 32833 | | 32833 | 20 | 6566.6 | 39399.6 |
| Ընդամենը | | | | | | 32833 | X | 6566.6 | 39399.6 |

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
(անունը, ազգանունը)

26/07/2018 11:36:21

Ստացող

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ու Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

04.07.2018թ. ք. Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Հովհաննես Սարգսյանս, վերանայելով թիվ 41200618 քրեական գործի նյութերը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

պ ա ր զ ե ց ի՝

2018թ. հունիսի 15-ին Կապանի բնակչուհի Հերմինե Մանվելի Ադամյանը հաղորդում է տվել ոստիկանության Կապանի բաժին, նույն օրը նաև բացատրություն, որ 2018թ. հունիսի 14-ին՝ ժամը 12-ի սահմաններում, իր ծանոթ Աշոտ Միքայելյանի ուղարկած տաքսիով ընկերուհու՝ Լիլիթ Կարապետյանի հետ գնացել են նրա՝ Կապան համայնքի Բաղաբուրջ թաղամասում գտնվող տուն, որտեղ Աշոտ Միքայելյանի հետ օղի է խմել, այնուհետև վերջինս, իր կամքին հակառակ, սեռական բնույթի բռնի գործողություններ ՝ կատարել իր նկատմամբ՝ առնանդամը մտցրել է բերանը, որի ընթացքում վնասվածքներ է ստացել բերանի, կրծքավանդակի և մեջքի շրջաններում:

Հաղորդման առթիվ Սյունիքի մարզային քննչական վարչությունում նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել՝ Հերմինե Ադամյանի՝ Աշոտ Միքայելյանի կողմից իր նկատմամբ կամքին հակառակ բռնի սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու և իրեն ծեծի ենթարկելու հաղորդման առթիվ նախապատրաստված, ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքի բացակայության՝ ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով և ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

2018թ. հունիսի 27-ին Սյունիքի մարզի դատախազության դատախազը նկատի ունենալով, որ Հերմինե Ադամյանը կատարել է սուտ մատնություն, այն է՝ 2018թ. հունիսի 15-ին ոստիկանության Կապանի բաժնին հաղորդում է տվել, որում գիտակցելով որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է, Կապան համայնքի բնակիչ Աշոտ Միքայելյանին մեղադրել է ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծանր հանցագործության կատարման մեջ, այսինքն առերևույթ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի հատկանիշներ:

Դեպքի առթիվ Սյունիքի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 41200618 քրեական գործը և նույն օրը ուղարկվել ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն, կատարվում է նախաքննություն:

Վերը նշված հանցանքը կատարելու համար 2018թ. հուլիսի 4-ին Հերմինե Ադամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Համաձայն <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲ ընկերությունից ստացված գրության՝ Հերմինե Ադամյանը դիսպանսերում հաշվառված է

<<Անձի հիստերիկ խանգարում, դեկոմպենսացիայի փուլում, հաճախակի սուիցիդալ փորձերով, բարդացած ալկոհոլիզացիայով>> ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ Հերմինե Աղամյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245-րդ և 248-րդ հոդվածներով,

**ո ր ո շ ե ց ի՝**

1. Թիվ 41200618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<ՍՄՆՀԴ>> ՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը

ա/ Հերմինե Աղամյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապու՞մ է, թե՞ ոչ, եթե այո, ապա, ինչպիսի՞ հիվանդությամբ և երբվանի՞ց:

բ/ Եթե Հերմինե Աղամյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, ապա իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակահատվածում կամ դրանից հետո կարո՞ղ էր հաշիվ տալ իրեն, իր գործողությունների համար և ղեկավարել դրանք:

գ/ Հերմինե Աղամյանը մեղսունա՞կ է, սահմանափա՞կ մեղսունակ, թե՞ անմեղսունակ:

դ/ Հերմինե Աղամյանը հարկադիր բուժման կարի՞ք ունի, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞, և հասարակության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ:

ե/ Մեղսունակության վիճակում հանցագործությունը կատարելուց հետո, ներկայումս ինչպիսի՞ հոգեկան վիճակում է գտնվում Հերմինե Աղամյանը, նրա մոտ հոգեկան հիվանդություն կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում հայտնաբերվե՞լ է, թե՞ ոչ:

զ/ Հերմինե Աղամյանի մոտ առկա է արդյոք մտավոր թերզարգացում, որի հետևանքով ընդունակ չլիներ ամբողջ չափով գիտակցել իր կողմից կատարած արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարեր դա:

3. Փորձագետներին ներկայացնել Հերմինե Աղամյանին և տրամադրել թիվ 41200618 քրեական գործի նյութերը:

4. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ Հովհաննես Սարգսյան